սովորաբար, հաստլիկ, կարճլիկ մի մարդ է բարի դէմքով: Մեզ ընդունեց մեծ սիրով, սեղմեց ձեռքերնիս եւրոպավարի, բարեւեց մեզ մի թոթով ռուսերէնով. եւ իսկոյն հրամայեց թէյ բերեն:

Ճապոնական թէյը հրամցնում են փոքրիկ գաւաթիկ-ներով եւ առանց շաքարի. բայց համեղ կաստերան լիուլի փոխարինում է շաքարի պակասը:

Թէյից յետոյ Իեզակին մեզ առաջնորդեց վերի յարկը, ուր իրերն էին ցուցադրուած: Փղոսկրի քանդակումը հիանալի է ուղղակի իր նրբութեամբն ու գեղեցկութեամբը: Ամենից աւելի աչքի ընկնող տեղում զետեղուած էին կրեայի պատեանից շինած ճապոնական ու եւրոպական մի քանի ռազմանաւեր:

Կայմերը իրանց կայաններով, պարանները, ելարանները, մինչեւ անգամ սանդուխի իւրաքանչիւր աստիճանը դուրս էր բերուած զարմանալի ճշտութեամբ ու մաքուր:

Իեազակիի այդ մանրանկար գեղարուեստական փոքրիկ աշխարհից մենք ընկանք ուղղակի ժողովրդական ու եռուն առեւտրի տաճարը, ճապոն-բազարը, որ մեր կարաւանսարային համապատասխանող մի բան է:

Դա մի մեծ կլոր շէնք է, ուր խանութների շարքը ձգւում է ճառագայթի ձեւով դէպի կենտրոնը, ապա կենտրոնից դէպի շրջագիծը, կազմելով մի նեղ անընդհատ անցք, որից չես կարող դուրս գալ, մինչեւ որ այդ ամբողջ լաբիրինտը անց չը կենաս իր բոլոր անկիւններովն ու թեքումներովը, եթե միայն, յուսահատած, կէս ճամփիցդ յետ չը դառնաս:

Ապրանքի տեսակները շատ չեն եւ շարունակ կրկնւում են: Մասնաւորապէս շատ կան զանազան գոյնի թաւշեայ քսակներ, զարդ հերկալներ, եւ անթիւ անհամար թղթէ